« 09 » նոյեմբեր 2026 թ. No 6617 - Ա

«ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱԼԻԱՏԻՎ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐՏԱԳՆԱ ՄՊՕ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ» ԹԵՄԱՅՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

Նոյեմբերի 13-28-ը, 2026թ., ք. Գյումրի (ԱԲՆ Գյումրու երեխաների տուն)
Մանկական բժիշկների հայկական ասոցիացիա (ՄԲՀԱ),

«Առողջության իրավունք» առողջապահական, սոցիալական ՀԿ

- Թիրախային լսարան՝ մանկաբույժներ, մանկական նյարդաբաններ, մանկական վերականգնողաբաններ, մանկական անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգներ, բուժքույրեր, ֆիզիկական թերապիստներ, կլինիկական հոգեբաններ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 20-25 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 20 տեսական և 11 գործնական կրեդիտ. դասավանդողներ Անուշ Սարգսյանին՝ ՇՄԶ 18 տեսական և 10 գործնական կրեդիտ, Հռիփսիմե Մարտիրոսյանին՝ 1 տեսական և 8 գործնական կրեդիտ
- Կոնտակտ 098215959

Օր 1՝ նոյեմբերի 13		
09^{45}-10^{00}	Մասնակիցների գրանցում	
10^{00}-10^{15}	Ողջույնի խոսք. ծրագրի ներկայացում, դասընթացի վերջնարդյունքների ներկայացում	Էդուարդ Հովհաննիսյան «Առողջության իրավունք» առողջապահական, սոցիալական ՀԿ նախագահ Սերգեյ Սարգսյան, «Արաբկիր» ԲՀ-ի ԵԴԱԻ-ի ղեկավար, Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի նախագահ
10^{15}-10^{30}	Նախաթեստ	
10^{30} -11^{30}	**Դասախոսություն** Ներածություն. Մանկական պալիատիվ օգնության սկզբունքները, ցուցումները և մոտեցումները: Ինտերակտիվ դասախոսություն	Անուշ Սարգսյան/ Եվա Մովսեսյան
11^{30}-13^{00}	**Դասախոսություն** Ցավի գնահատում՝ ըստ տարիքի և հաղորդակցման հնարավորությունների: Տարիքին համապատասխան գնահատման սանդղակների կիրառում: Ցավի դեղորայքային և ոչ դեղորայքային կառավարում, բուժման արդյունավետության և կողմնակի	Անուշ Սարգսյան

	ազդեցությունների վերահսկում: Ինտերակտիվ դասախոսություններ	
13^{00}-13^{30}	Ընդմիջում	
13^{30}-14^{30}	**Դասախոսություն** Ցավի կառավարման սկզբունքներ, ներառյալ օփիոիդների անվտանգ կիրառման, դեղաչափերի անհատականացման, կողմնակի ազդեցությունների վերահսկման հարցերը: Ինտերակտիվ դասախոսություն	Անուշ Սարգսյան
14^{30}-16^{30}	**Գործնական աշխատանք** Ցավի և այլ ախտանիշների գնահատում՝ կլինիկական դեպքերի հիման վրա: Խմբային աշխատանք դեպքերի հիման վրա, քննարկումներ	Անուշ Սարգսյան
16^{30}-16^{45}	Օրվա ամփոփում, քննարկում, մյուս օրվա գործնական աշխատանքների պլանավորում	
Օր 2՝ նոյեմբերի 14		
09^{45}-10^{00}	Մասնակիցների գրանցում	
10^{00}-11^{30}	**Դասախոսություն** Ստամոքսաղիքային ախտանիշներ՝ սրտխառնոց, փսխում, փորկապություն, փորլուծություն, որովայնի փքվածություն և սնուցման անհանդուրժողականություն: Ինտերակտիվ դասախոսություն	Անուշ Սարգսյան
11^{30} -13^{00}	**Դասախոսություն** Գաստրոստոմայի, տրախեոստոմայի, աղիքային ստոմաների և ուրոստոմայի տեսակները, ցուցումները և խնամքի առանձնահատկությունները: Ստոմայի շրջանի մաշկի խնամք, սարքերի օգտագործում և փոխարինում՝ ըստ տեսակի ու տեղական արձանագրությունների: Ստոմաների, միզային կաթետրի և խողովակների հետ կապված բարդություններ՝ խցանում, տեղաշարժ, արտահոսք, արյունահոսություն, վարակման նշաններ և մաշկի վնասում: Ինտերակտիվ դասախոսություն	Անուշ Սարգսյան
13^{00}-13^{30}	Ընդմիջում	
13^{30}-15^{00}	**Դասախոսություն** Էնտերալ սնուցման սկզբունքներ՝ բերանային սնուցում, նազոգաստրալ զոնդ, գաստրոստոմա, սնուցման ռեժիմ, հեղուկների ընդունում և սնուցման հանդուրժողականության գնահատում: Երեխայի սնուցման կարիքների անհատականացում՝ հաշվի առնելով աճը, քաշը, հիվանդությունը, բուժման նպատակները և երեխայի ու ընտանիքի նախասիրությունները: Էնտերալ սնուցման կազմակերպում և սնուցման սարքերի հետ անվտանգ աշխատանք: Ինտերակտիվ դասախոսություններ	Անուշ Սարգսյան
15^{00}-16^{00}	**Դասախոսություն** Նյարդաբանական ախտանիշներ՝ ցնցումներ, մկանային սպաստիկություն, անհանգստություն և գրգռվածություն: Ինտերակտիվ դասախոսություն	Անուշ Սարգսյան

16^{00}-16^{30}	**Գործնական աշխատանք** Դիսֆագիայի և ասպիրացիայի ռիսկի գնահատում, սնուցման անվտանգ դիրք և համապատասխան մասնագետի ներգրավում: Գործնական աշխատանք. արձանագրությունների ուսումնասիրություն, տեսանյութերի դիտում, դեպքերի քննարկում	Անուշ Սարգսյան
16^{30}-16^{45}	Օրվա ամփոփում, քննարկում, մյուս օրվա գործնական աշխատանքների պլանավորում	
Օր 3՝ նոյեմբերի 20		
09^{45}-10^{00}	Մասնակիցների գրանցում	
10^{00}-11^{00}	**Դասախոսություն** Շնչառական ախտանիշներ՝ շնչահեղձություն, շնչուղիների արտազատուկներ, հազ և աղմկոտ շնչառություն: Ինտերակտիվ դասախոսություն	Անուշ Սարգսյան
11^{00}-12^{00}	**Գործնական աշխատանք** Ստոմայի և գաստրոստոմայի խնամքի ցուցադրում և վարժանք: Էնտերալ սնուցման սարքերի հետ անվտանգ աշխատանք: Գործնական աշխատանք, դեպքերի քննարկում, վարժանք	Անուշ Սարգսյան/ Հռիփսիմե Մարտիրոսյան
12^{00} -13^{00}	**Գործնական աշխատանք** Տրախեոստոմայով երեխայի խնամքի և վտանգավոր նշանների ճանաչման սիմուլյացիա: Գործնական աշխատանք, դեպքերի քննարկում, վարժանք	Անուշ Սարգսյան/ Հռիփսիմե Մարտիրոսյան
13^{00}-13^{30}	Ընդմիջում	
13^{30}-15^{00}	**Գործնական աշխատանք** Երեխայի դիրքավորում և անվտանգ տեղափոխում, երեխային գրկելու, անկողնում շրջելու և օժանդակ միջոցներ օգտագործելու սկզբունքներ: Գործնական աշխատանք. արձանագրությունների ուսումնասիրություն, տեսանյութերի դիտում, քայլերի ցուցադրություն, դեպքերի քննարկում	Անուշ Սարգսյան/ Հռիփսիմե Մարտիրոսյան
15^{00}-16^{30}	**Դասախոսություն** Մաշկի խնամք: Ճնշման վնասվածքների կանխարգելում: Քնի խանգարումներ: Բերանի խոռոչի խնամք, տարածված խնդիրներ: Ինտերակտիվ դասախոսություններ	Անուշ Սարգսյան
16^{30}-17^{00}	Օրվա ամփոփում, քննարկում, մյուս օրվա գործնական աշխատանքների պլանավորում	
Օր 4՝ նոյեմբերի 21		
09^{45}-10^{00}	Մասնակիցների գրանցում	
10^{00}-13^{00}	**Դասախոսություն** Էթիկական հարցերը ՄՊՕ-ում: Ծնողների ու խնամողների հոգեսոցիալական աջակցություն: Թիմի հետ հաղորդակցություն: Կյանքի վերջին փուլի հետ կապված հաղորդակցություն:	Անուշ Սարգսյան
13^{00}-13^{30}	Ընդմիջում	
13^{30}-14^{30}	**Դասախոսություն**	Եվա Մովսեսյան

	Անհետաձգելի օգնություն՝ շնչուղիների խցանում, կողքի ապահովության դիրք, սիրտ-թոքային վերակենդանացում: ԱՕ առանձնահատկությունները ծանր շարժողական և մտավոր խնդիրների դեպքում:	
14^{30}-15^{30}	**Գործնական աշխատանք** Անհետաձգելի օգնության առանձնահատկությունները ծանր շարժողական և մտավոր խնդիրների դեպքում: Գործնական աշխատանք. արձանագրությունների ուսումնասիրություն, տեսանյութերի դիտում, քայլերի ցուցադրություն	Եվա Մովսեսյան
15^{30}-16^{30}	**Դասախոսություն** Կյանքի վերջին փուլի ախտանիշների վերահսկում և երեխայի հարմարավետության ապահովում:	Անուշ Սարգսյան
16^{30}-17^{00}	Օրվա ամփոփում, քննարկում, մյուս օրվա գործնական աշխատանքների պլանավորում	
Օր 5՝ նոյեմբերի 28		
09^{45}-10^{00}	Մասնակիցների գրանցում	
10^{00}-11^{00}	**Դասախոսություն** Տնային այցի կառուցվածք, կարիքների համապարփակ գնահատում, խնամքի պլան:	Անուշ Սարգսյան
11^{00} -12^{00}	**Դասախոսություն** Խնամողների ուսուցում: Ինտերակտիվ դասախոսություն, արձանագրությունների ուսումնասիրություն, քննարկում	Անուշ Սարգսյան, Հռիփսիմե Մարտիրոսյան
12^{00} -13^{00}	**Գործնական աշխատանք** Տնային այցի փաստաթղթավորում: Գործնական աշխատանք. խմբային աշխատանք՝ դեպքերի քննարկում և պլանների կազմում (գործնական)	Անուշ Սարգսյան, Հռիփսիմե Մարտիրոսյան
13^{00}-13^{30}	Ընդմիջում	
13^{30}-15^{00}	**Գործնական աշխատանք** Երեխայի և ընտանիքի կարիքների գնահատում կլինիկական դեպքերի օրինակի վրա: Տնային այցի սիմուլյացիա՝ երեխայի գնահատումից մինչև խնամքի պլանի կազմում և ընտանիքի ուսուցում: Գործնական աշխատանք. խմբային աշխատանք՝ դեպքերի քննարկում և պլանների կազմում (գործնական)	Անուշ Սարգսյան, Հռիփսիմե Մարտիրոսյան
15^{00}-16^{30}	**Գործնական աշխատանք** Գործնական հմտությունների ստուգաթերթերով գնահատում: Գործնական աշխատանք ստուգաթերթերի օգտագործմամբ	Անուշ Սարգսյան, Հռիփսիմե Մարտիրոսյան
16^{30}-17^{00}	Ամփոփիչ հետթեստ: Դասընթացի ամփոփում, գնահատում, մասնակիցների հետադարձ կապ, խնդիրների քննարկում և հետագա աշխատանքների պլանավորում:	